



**Կարգապահական գործ թիվ 17026**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2017թ-ի հոկտեմբերի 17-ի թիվ 160-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/94-Ա**

**ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ  
ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տարոն Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի, Կարապետ Աղաջանյանի, Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78), Արթուր Գրիգորյանի (արտոնագիր թիվ 255) և Արմեն Սողոմոնյանի (արտոնագիր թիվ 771) (**այսուհետ՝ նաև Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Փաստաբան Գևորգ Գևորգյանը (**այսուհետ նաև Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ 2001թ-ից հանդիսանում է փաստաբան, իսկ դիմումը ներկայացնելու պահին աշխատում է Պալատում՝ զբաղեցնելով ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի պաշտոնը: 20.03.2017թ. Տիգրան Աթանեսյանը մուտք է արել բողոք Պալատի նախագահի 28.12.2016թ. թիվ 509-Ա/ԿԳ-16226 որոշման դեմ, որը մակագրվել է իրեն և ինքը գրությամբ պատասխանել է Տիգրան Աթանեսյանի բողոքին:

Պատասխանող Տիգրան Աթանեսյանը բողոքի պատասխանը ստանալուց հետո այն տեղադրել է Attorney At Law Ֆեյսբուքյան խմբում, որը տվյալ պահին ունեցել է 422 անդամ և կատարել հետևյալ գրառումը. «Սա պալատականների պատասխանն է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին հասցեագրված իմ

բողոքին: Երբ որ ասում եմ, որ պալատը անհույս հիվանդ կառույց է, մի քանի հատ փաստաբան փորձում են ինձ առարկել, վկայակոչելով ինչ-որ մի ամորֆ համայնքի միասնականության գաղափարներ: Այս պատասխանը ստորագրել է կանոնադրությամբ չնախատեսված եսիմ ով, իսկ հետևում ինչպես միշտ թաքնվել է «սիրելի» նախագեն»: Վիրավորանք հասցնելու անզուսպ միտումով կազմված, իրենց իրական դեմքը բացահայտող այս թղթի կտորը ապացուցում է թե դրա հեղինակների տարրական անգրագիտությունը, թե տարրական դաստիարակության պակասը: Ցավոք գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր պարկեշտ փաստաբան պատրաստ է լինել մի կառույցում սրանց նմանների հետ:»

Տիգրան Աթանեսյանը, արձագանքելով իր գրառման վերաբերյալ այլ փաստաբանների գրառումներին, նաև նշել է հետևյալը.

- Կարծիք ունենալու համար՝ արալեզները լիզում են մինչև խեղդամահ լինելը դե վստահ են, որ լեզուն դրա համարա)))
- Արթուր, ասած քո ոճով՝ «меня терзают смутные сомнения, у Шпака магнитофон, у посла медальон...» էդ նույն գգ-ն, որ հիմա ուրիշի նամակներնա ստորագրում ժամանակին քո հայցով ներկայացնում էր Հրապարակ թերթին, էդ նույն Հրապարակին, որը Արմեն Սողոմոնյանի մասին շատ արագ նյութ տեղադրեց, մարդա մեկի քամակը փրկելու համար ..... Ջուգադիպություններ?)))
- Իմ պատանեկության օրոք նման վարքագիծն անվանվում էր մուտիլյովժիկություն և սովորաբար ավարտվում էր ստորացմամբ: Դաժան էինք և անհեռատես )))

Այս գրառման տակ գրառումներ են կատարել նաև այլ փաստաբաններ, որոնցից Դիմողը վկայակոչել է հետևյալ փաստաբանների գրառումները՝

- Պատասխանող Արթուր Գրիգորյանի կողմից կատարված գրառումներ.
- Ոնց որ թե մի քանիսի լեզուները պոկելու ժամանական ա հասունացել
- Լեզու ունեն՝ լիզում են ..., այ քեզ բան ....

Արմեն Սողոմոնյանի կողմից կատարված գրառումներ.

- Հարգելի ընկերներ էդ քամակը փրկված չի, դրա հետ կապված դեռ շատ արկածներ են սպասվում Ցենտրալ ներսնա –իրավական տարածքում
- փաստորեն Ցենտրալն ու Գոմայգին անառակության հետ կապ չունեն, ինչ կատարվում ա դրանց արանքում ա կատարվում, բա...<sup>1</sup>

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 10.05.2017թ. թիվ 126-Ա/ԿԳ-17026 որոշման հիման վրա փաստաբաններ Տիգրան Աթանեսյանի, Արթուր Գրիգորյանի և Արմեն Սողոմոնյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

<sup>1</sup> Արմեն Սողոմոնյանի գրառումը կատարված է լատինատառ::

Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել Գևորգ Գևորգյանը:  
 Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):  
 20.05.2017թ. Նախապատրաստողը փոխարինվել է, և կարգապահական գործի նախապատրաստումը հանձնվել է փաստաբան Վիկտորյա Կիրակոսյանին:

### **3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողից բացատրություն չի պահանջարկվել:

Խորհրդի նիստում Դիմողը նշել է, որ «Attorney At Law» ֆեյսբուքյան խմբում Պատասխանողների կողմից կատարված գրառումները՝ որպես ապացույց ապահովել է նոտարական կարգով, քանի որ մտավախություն է ունեցել, որ իր կողմից Պալատ բողոք ներկայացնելուց հետո Պատասխանողները կարող են այդ գրառումները վերացնել, իսկ, ընդհանրապես, Պատասխանողները պարբերաբար նման բաներ են անում:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանողներ Տիգրան Աթանեսյանից, Արթուր Գրիգորյանից և Արմեն Սողոմոնյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, սակայն Պատասխանողների կողմից պատասխան չի ստացվել:

#### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 12.07.2017թ. կազմել է եզրակացություն, որի եզրափակիչ մասում նշել է. «Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, սույն եզրակացությունը ներկայացվում է Պալատի խորհրդին:

Փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Պալատի խորհուրդը»:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերը առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 17.07.2017 թ., Խորհրդի նիստի օր, ժամ և վայր է նշանակվել է, նիստը տեղի է ունեցել 17.10.2017թ. ժամը 19:30-ին , ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ՝ նաև Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապարաստորդի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապարաստորդի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1) Դիմող Գևորգ Գևորգյանը դիմումը ներկայացնելու պահին աշխատում է Պալատում՝ զբաղեցնելով ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի պաշտոնտը, հանդիսանում է փաստաբան:

2) 20.03.2017թ. Պատասխանող փաստաբան Տիգրան Աթանեսյանը Պալատ մուտք է արել բողոք Պալատի նախագահի 28.12.2016թ. թիվ 509-Ա/ԿԳ-16226 որոշման դեմ, որը մակագրվել է դիմող Գևորգ Գևորգյանին և վերջինս գրությամբ պատասխանել է Տիգրան Աթանեսյանի բողոքին:

3) Տիգրան Աթանեսյանը պատասխանը ստանալուց հետո 06 ապրիլի 2017թ. այն տեղադրել է Attorney At Law ֆեյսբուքյան խմբում, որը տվյալ պահին ունեցել է 422 անդամ և կատարել է հետևյալ գրառումը. «Սա պալատականների պատասխանն է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին հասցեագրված իմ բողոքին: Երբ որ ասում եմ, որ պալատը անհույս հիվանդ կառույց է, մի քանի հատ փաստաբան փորձում է են ինձ առարկել, վկայակոչելով ինչ-որ ամորֆ համայնքի միասնականության գաղափարներ: Այս պատասխանը ստորագրել է կանոնադրությամբ չնախատեսված եսիմ ով, իսկ հետևում ինչպես միշտ թաքնվել է «սիրելի» նախագեն»: Վիրավորանք հասցնելու անզուսպ միտումով կազմված, իրենց իրական դեմքը բացահայտող այս թղթի կտորը ապացուցում է, թե դրա հեղինակների տարրական անգրագիտությունը, թե տարրական դաստիարակության պակասը: Ցավոք գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր պարկեշտ փաստաբան պատրաստ է լինել մի կառույցում սրանց նմանների հետ:»

4) Տիգրան Աթանեսյանի կողմից 06 ապրիլի 2017թ-ին Attorney At Law ֆեյսբուքյան խմբում տեղադրված գրառման տակ պատասխանող փաստաբանները 06 ապրիլի 2017թ. կատարել են հետևյալ գրառումները.

Պատասխանող Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված գրառումներ.

**-Կարծիք ունենալու համար՝ արալեզները լիզում են մինչև խեղդամահ լինելը**

*-դե վստահ են, որ լեզուն դրա համարա))*

*-Արթուր, ասած քո ոճով՝ «меня терзают смутные сомнения, у Шпака магнитоффон, у посла медальен...» էդ նույն գգ-ն, որ հիմա ուրիշի նամակներնա ստորագրում ժամանակին քո հայցով ներկայացնում էր Հրապարակ թերթին, էդ նույն Հրապարակին, որը Արմեն Աողոմոնյանի մասին շար արագ նյութ տեղագրեց, մարդա մեկի քամակը փրկելու համար... Ձուգադիպություններ?))*

*-Իմ պատանեկության օրոք նման վարքագիծն անվանվում էր մուրիյովչիկություն և սովորաբար ավարտվում էր ստորագմամբ: Դաժան էինք և անհեռալես )))*

Պատասխանող Արթուր Գրիգորյանի կողմից կատարված գրառումներ

*-Ոնց որ թե մի քանիսի լեզուները պոկելու ժամանակն ա հասունացել*

*-Լեզու ունեն՝ լիզում են .... այ քեզ բան...*

Պատասխանող Արմեն Աողոմոնյանի կողմից կատարված գրառումներ.

*-Հարգելի ընկերներ էդ քամակը փրկված չի, դրա հետ կապված դեռ շար արկածներ են սպասվում Ցենտրալ ներսնա-իրավական տարածքում*

*-փաստորեն Ցենտրալն ու Գոմայգին անառակության հետ կապ չունեն, ինչ կատարվումա դրանց արանքումա կատարվում, բա...*

*Նշված փաստերը ապացուցվում են գործում գտնվող գրավոր ապացույցներով նոտարական կարգով ապահովված ֆեյսբուքյան գրառումներով և դիմողի բացատրությամբ:*

**6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի աշխատակազմի ղեկավար Մ. Կարապետյանի կողմից տրամադրված տեղեկանքների համաձայն՝

- **փաստաբան Արմեն Սողոմոնյանը** փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 19.10.2007թ., 2007-2017թթ. վերջինիս նկատմամբ 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 1-ը կարճվել է, 1-ը կասեցվել է, 3 վարույթով Արմեն Սողոմոնյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից 1-ը դատական կարգով բողոքարկվում է և ուժի մեջ չի մտել, 2 կարգապահական տույժերը մարվել են,

- **փաստաբան Արթուր Գրիգորյանը** փաստաբանի արտոնագիրն ստացել է 10.10.1995թ., 2006-2017թթ. վերջինիս նկատմամբ **14 անգամ** հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 8-ը կարճվել է, 6 վարույթով Արթուր Գրիգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, 2 վարույթով կարգապահական տույժերը մարվել են, 1 կարգապահական վարույթով հիմնական տույժը մարվել է, իսկ լրացուցիչ տույժը՝ ոչ, 4 կարգապահական տույժ մարված չէ,

- **փաստաբան Տիգրան Աթանեսյանը** փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.03.2001թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 2 կարգապահական

վարույթ, որոնցից 1-ը կասեցվել է, իսկ մյուսով Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, սակայն որոշումն ուժի մեջ չի մտել, քանի որ բողոքարկվում է դատական կարգով:

### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

*Պալատի խորհուրդը, լսելով Դիմողի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբաններ Տիգրան Աթանեսյանը, Արթուր Գրիգորյանը և Արմեն Սողոմոնյանը թույլ են տվել Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի խախտում, հետևյալ պատճառաբանությամբ:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

#### **Ա. Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման մասով**

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի մեջբերված դրույթները բովանդակային առումով փոխկապակցված են, և փաստաբանի կողմից Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև 5.1.2 ենթակետի պահանջի խախտման: Հետևաբար Խորհուրդը նշված իրավադրույթների խախտման հարցը քննարկում է համակցության մեջ և անհրաժեշտ է համարում պարզել՝

- արդյո՞ք Պատասխանողները՝ փաստաբաններ Տիգրան Աթանեսյանը, Արթուր Գրիգորյանը և Արմեն Սողոմոնյանը Դիմողի՝ փաստաբան Գևորգ Գևորգյանի նկատմամբ թույլ են տվել այնպիսի գործողություններ կամ արտահայտություններ, որոնք արատավորում են փաստաբանի արժանապատվությունը և համբավը՝ այդպիսով Դիմողին չընդունելով որպես մասնագիտական աշխատակից և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք չցուցաբերելով նրա հանդեպ:

Այս կապակցությամբ Խորհուրդը հիշեցնում է, որ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, նրա վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի

մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման գործում շատ կարևոր է փաստաբանի և իր գործընկերների միջև հարաբերությունների կառուցումը:

Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Այլ փաստաբանի մասնագիտության, անձնավորության, գործնական համբավի նկատմամբ հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն, քանի որ նրա բարոյական պարտականությունն է փաստաբանի կոչման արժանապատվության և փաստաբանության հեղինակության մասին հոգալը:

Այսպիսով, Կանոնագրքի կանոնը՝ մյուս բոլոր փաստաբաններին որպես մասնագիտական աշխատակիցներ ընդունելու, նրանց նկատմամբ անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերելու և այլ փաստաբանի նկատմամբ նրա՝ որպես փաստաբանի արժանապատվությունը և համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն է, քանի որ չի կարող իր նկատմամբ հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Պատասխանողները Դիմողի նկատմամբ թույլ են տվել հետևյալ արտահայտությունները, որոնք արատավորում են Դիմողի՝ որպես փաստաբանի արժանապատվությունն ու համբավը: Մասնավորապես՝ Պատասխանող Տիգրան Աթանեսյանը ֆեյսբուքում գրառել է Դիմողին հասցեագրված հետևյալ արտահայտությունները. «...այս պատասխանը ստորագրել է կանոնադրությամբ չնախատեսված եսիմ ով..., ...վիրավորանք հասցնելու անզուսպ միտումով կազմված, իրենց իրական դեմքը բացահայտող այս թղթի կտորը ապացուցում է թե դրա հեղինակների տարրական անգրագիտությունը, թե տարրական դաստիարակության պակասը, ...ցավոք գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր պարկեշտ փաստաբան պատրաստ է լինել մի կառույցում սրանց նմանների հետ, կարծիք ունենալու համար արալեզները լիզում են մինչև խեղդամահ լինելը, դե վստահ են, որ լեզուն դրա համարա, ... էդ նույն գգ-ն, որ հիմա ուրիշի նամակներնա ստորագրում ժամանակին քո հայցով ներկայացնում էր Հրապարակ թերթին, էդ նույն Հրապարակին, որը Արմեն Աողոմոնյանի մասին շատ արագ նյութ տեղագրեց, մարդա մեկի քամակը փրկելու համար... Զուգադիպություններ՝ իմ պատանեկության օրոք նման վարքագիծն անվանվում էր մուտիլյովչիկություն և սովորաբար ավարտվում էր ստորագմամբ: Դաժան էինք և անհեռատես:», Պատասխանող Արթուր Գրիգորյանը գրառել է հետևյալ արտահայտությունները. « Ոնց որ թե մի քանիսի լեզուները պոկելու ժամանակն ա հասունացել, լեզու ունեն՝ լիզում են .... այ քեզ բան...», Պատասխանող Արմեն

Սողոմոնյանը գրառել է հետևյալ արտահայտությունները. «**Հարգելի ընկերներ էք քամակը փրկված չի, դրա հետ կապված դեռ շատ արկածներ են սպասվում Ցենտրալ ներսնա-իրավական տարածքում, փաստորեն Ցենտրալն ու Գոմայգին անառակության հետ կապ չունեն, ինչ կատարվումա դրանց արանքումա կատարվում, բա...»:**

Պատասխանողների կողմից արված այս արտահայտություններն ուղղված են եղել Դիմողին՝ որպես փաստաբանի:

Բացի այդ, «Attorney At Law» ֆեյսբուքյան խումբը գերազանցապես վերաբերում է փաստաբաններին և փաստաբանական գործունեությանը, մասնավորապես, փաստաբանների համայնքում տեղի ունեցող իրադարձություններին և փաստաբանների գործունեության հետ կապված առկա խնդիրների քննարկմանը: Սույն փաստը լրացուցիչ անգամ գալիս է վկայելու այն հանգամանքը, որ Պատասխանողների վերոշարադրյալ արտահայտություններն ուղղված էին Դիմողի՝ որպես փաստաբանի անձին և արվել են փաստաբանների ներառող և նրանց գործունեության քննարկմանը նվիրված ֆեյսբուքյան խմբում:

Ինչ վերաբերում է նրան, թե արդյոք Պատասխանողների կողմից թույլ տրված արտահայտությունները եղել են Պատասխանողի՝ որպես փաստաբանի արժանապատվությունն ու համբավը արատավորող, Խորհուրդը գտնում է, որ «Attorney At Law» ֆեյսբուքյան խմբում տեղ գտած նշված գրագրության ընդհանուր բովանդակությունը և Պատասխանողների՝ վերը մեջբերված առանձին բառերի և արտահայտությունների իմաստն ունեցել են վիրավորական բնույթ, որն ակնհայտ է ցանկացած ողջամիտ անձի համար:

Ավելին՝ 19.02.2016թ. փաստաբան Սամվել Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին ԿԳԱ 20/Ա որոշման մեջ Խորհուրդը փաստացի հանգել է այն եզրակացության, որ փաստաբանի կողմից արված արտահայտությունը ոչ կոռեկտ և անհարգալից որակելու համար հարկ է որոշել՝ արդյոք այդ արտահայտությունը վիրավորական կլիներ այն թույլ տվողի համար, եթե ասվեր իրեն: Սույն դեպքում ակնհայտ է, որ նման արտահայտությունը վիրավորական կլինի ցանկացած ողջամիտ անձի, այդ թվում Պատասխանողների համար, եթե ուղղված լիներ իրենց:

Այսպիսով, Պատասխանողների նշված արտահայտությունները, Խորհրդի գնահատմամբ, հանդիսանում են Դիմողի՝ որպես փաստաբանի պատիվը և արժանապատվությունը արատավորող և ընդունելի չեն փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում փաստաբանի բարձր կոչումը կրող անձանց միջև: **Այդպիսով Պատասխանողները նաև խախտել են Դիմողին որպես մասնագիտական աշխատակից ընդունելու նրա հանդեպ անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերելու՝ Կանոնագրքով սահմանված իրենց պարտականությունը:**

**Բ. Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման մասով**  
Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ **մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր**



**գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդը անհրաժեշտ է համարում հետևյալ հարցադրմանը՝

**- արդյո՞ք Պատասխանողն իր գործունեությամբ չի նպաստել մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի մասնագիտությունն ունի հասարակական մեծ կարևորություն և դրանով պայմանավորված՝ առանձնահատուկ կարգավիճակ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում: Ուստի՝ **փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ**, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ: Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ, ընդհանրապես, ուստի և փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Սույն պարագայում Պատասխանողների կողմից Դիմողին հասցեագրված արտահայտությունները կրել են վիրավորական, ինչպես նաև որոշակի դեպքերում խոսակցական-ոչ ցենզուրային բնույթ՝ հանդիսանալով փաստաբանին անհարիր վարքագիծ:

Բացի այդ, հրապարակային գրառումներով Պատասխանողները նաև ոչ կոռեկտ ընդհանրական արտահայտություններ են կատարել (մասնավորապես՝ «**Ոնց որ թե մի քանիսի լեզուները պոկելու ժամանակն ա հասունացել, լեզու ունեն՝**

լիզում են ... այ քեզ բան..., հարգելի ընկերներ էդ քամակը փրկված չի, դրա հետ կապված դեռ շատ արկածներ են սպասվում Ցենտրալ ներսնա-իրավական տարածքում, փաստորեն Ցենտրալն ու Գոմայգին անառակության հետ կապ չունեն, ինչ կատարվումա դրանց արանքումա կատարվում, բա...» և այլն ), որոնք չեզող դիտորդի մոտ այդպիսի արտահայտություններ կատարող փաստաբանների վերաբերյալ բացասական կարծիք կարող էր ձևավորել:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «Attorney At Law» ֆեյսբուքյան խումբը ներառում է և փաստաբանների և իրավաբանների և Տիգրան Աթանեսյանի հրապարակված գրությունից ակնհայտ է, որ նա և մյուս անձինք փաստաբաններ են հանդես գալիս, Պալատի խորհուրդը գտնում է, որ խմբի մասնակիցների համար ակնհայտ է եղել, որ Պատասխանողները փաստաբան են:

Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ Պատասխանողներն իրենց վարքագծով ոչ միայն չեն նպաստել փաստաբանի ինստիտուտի հեղինակության բարձրացմանը, այլև ստվերել են փաստաբանի իրենց կարգավիճակը և անվանարկել փաստաբանության ինստիտուտի կոչումն ու հեղինակությունը:

Վերոշարադրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողները խախտել են Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջները:

Խորհուրդն ուշագրավ է համարում նշել Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ «Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի» 10 հիմնական սկզբունքներից 8-րդը. «Մասնագիտական գործընկերների նկատմամբ հարգանքը» (Principle (h) – respect towards professional colleagues), որը, նույն կանոնակարգի պաշտոնական մեկնաբանությունում<sup>2</sup> ներկայացվում է հետևյալ կերպ՝

« Սույն սկզբունքը պահանջում է ոչ միայն բարեվարքություն, չնայած նույնիսկ նման պահանջը բավարար է այն խիստ զգայուն և վիճահարույց գործերի պարագայում, որոնցում իրավաբանները հաճախ ներգրավվում են՝ ներկայացնելով իրենց վստահորդների շահերը:

Նշված սկզբունքին համապատասխան՝ իրավաբանը հանդես է գալիս որպես միջնորդ, ով լիազորված է ասել ճշմարտությունը, պարտավոր է ենթարկվել մասնագիտական կանոններին և կատարել տրված խոստումները:

Արդարադատության պատշաճ իրականացումը պահանջում է, որպեսզի իրավաբանները միմյանց վերաբերվեն այնպես, որ իրենց միջև կամ իրենց մասնակցությամբ ծագած վեճերը հանգուցալուծվեն քաղաքակիրթ ձևով: Նմանապես հանրային և իրավաբանական հանրույթի շահից է բխում իրավաբանների միջև հարաբերությունների հաստատումը՝ հիմնված բարեխղճության վրա և առանց միմյանց մոլորեցնելու վարքագծի դրսևորման:

Փոխադարձ հարգանքը գործընկերների միջև նպաստում է արդարադատության պատշաճ իրականացմանը, աջակցում է վեճերի և

<sup>2</sup> [http://www.ccbe.eu/NTCdocument/EN\\_CCBE\\_CoCpdf1\\_1382973057.pdf](http://www.ccbe.eu/NTCdocument/EN_CCBE_CoCpdf1_1382973057.pdf)

տարածայնությունների լուծմանը փոխհամաձայնության հիման վրա և բխում է վստահորդի շահերից»:

### **Կարգապահական տույժի ընտրությունը**

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.
- 4) տուգանք.
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, իսկ 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժ միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ հրապարակային վիրավորանքներից կարող են բխել անբարենպաստ հետևանքներ, ինչն ընդհանուր առմամբ կնվազեցնի փաստաբանության նկատմամբ հասարակության հարգանքը, գտնում է, որ Պատասխանողների նկատմամբ պետք է կիրառել տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև որպես լրացուցիչ տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով, Խորհուրդը՝

## **Ո Ր Ո Շ Ե Ց'**

1. Փաստաբաններ Տիգրան Աթանեսյանին (արտոնագիր թիվ 78), Արթուր Գրիգորյանին (արտոնագիր թիվ 255) և Արմեն Սողոմոնյանին (արտոնագիր թիվ 771) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման համար.

2. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ (արտոնագիր թիվ 78) կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով.

3. Փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր թիվ 255) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով.

4. Փաստաբան Արմեն Սողոմոնյանի (արտոնագիր թիվ 771) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով.

5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին Դիմողին և փաստաբաններ Տիգրան Աթանեսյանին, Արթուր Գրիգորյանին, Արմեն Սողոմոնյանին իրազեկելու (հանձնելու) մասին:

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նիստը նախագահող՝

Սեդրակ Ասատրյան